ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» նոյեմբերի 2014 թվականի N 172 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԵՐՁԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ճանապարհատրանսպորտային պատահարներում մարդկային զոհերի անընդունելի թիվը, այդ դեպքերի նվազեցման անհրաժեշտությունը, կանխարգելման հրամայականը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ մասերի, 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգի 17-րդ, 18-րդ կետերի դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Տրանսպորտի և կապի, Արտակարգ իրավիճակների նախարարներին և Ոստիկանության պետին ուղղված ուղերձ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան		
Գ. Ադամյան		
Ա. Բաղեյան		
Ա. Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Մ. Գաբոյան		
Ա.Գրիգորյան		
Վ.Եդիգարյան		
Գ.Թաթարյան		
Հ. Խաչատրյան		
Հ. Կարապետյան		

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«14» նոյեմբերի 2014 թ.

Հավելված՝
Գյումրի համայնքի ավագանու
2014թվականի նոյեմբերի 14
N 172 -Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ,
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ Ա.ԵՐԻՑՅԱՆԻՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ Վ.ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ՈՒՂԵՐՁ

Հարգարժան պարոնայք

Հանրապետության մի շարք ճանապարհահատվածներ եւ խաչմերուկներ թերի կարգավորվելու, չվերահսկվելու, ինչպես նաև վարորդների օրինազանցությունների պատճառով վերածվել են մարդկանց կյանքի եւ առողջության համար չափազանց ռիսկային տարածքների, ինչի պատճառով տարեկան մի քանի հարյուր զոհ է գրանցվում ճանապարհատրանսպորտային պատահարներում:

Վերջին ամենասարսափելին 2014 թվականի նոյեմբերի 10-ի երեկոյան, Շիրակի մարզի «Հոռոմի կամուրջ» անվանումը ստացած խաչմերուկում տեղի ունեցած ողբերգական ավտովթարն էր, որի հետևանքով այրվել և մահացել են յոթ ուղեվորներ, իսկ յոթը ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Դժբախտաբար, ճանապարհատրանսպորտային պատահարների մեծ թիվ է շարունակում գրանցվել նաև Գյումրիում: Պատճառների ցանկում հիմնականում վարորդների անպատասխանատու վարքն է, գիտելիքների պակասը, անսթափ վիճակում մեքենա վարելը, առանձին դեպքերում թերի կարգավորված և կահավորված, առանց լուսացույցների, ճանապարհային նշանների և գծանշումների խաչմերուկներն ու փողոցները, մի շարք թաղամասերում՝ գիշերային անբավարար լուսավորվածությունը:

Գյումրու փողոցները եւ խաչմերուկները ներկայումս կահավորված են երթևեկության կարգավորման համար անհրաժեշտ նշանների և սարքավորումների ընդամենը 20 տոկոսի չափով: Չնայած ամեն տարի որոշակի աշխատանքներ են կատարվում երթևեկության կարգավորման միջոցների ավելացման ուղղությամբ, սակայն համայնքի բյուջեի միջոցներով անհնար է դրանք լիարժեք և բավարար վիճակի բերել:

Տարբեր գնահատականներով, միայն Գյումրի քաղաքի ճանապարհային նշանների, սարքավորումների տեղադրման և կարգավորման համար անհրաժեշտ է մոտ 500 մլն դրամ, իսկ դրանց տարեկան սպասարկման և շահագործման համար՝ 50-60 մլն դրամ՝ ինչը քաղաքային բյուջեի միջոցներով իրականացնելը իրատեսական չէ:

Գյումրու ավագանին, նկատի ունենալով վերոհիշյալ հանգամանքները 2012 և 2013 թվականներին որոշումներ է ընդունել քաղաքի երթևեկության կարգավորման համար առկա գույքը և դրանց հետագա շահագործումն ու սպասարկումը ՀՀ ճանապարհային ոստիկանությանը հանձնելու մասին, սակայն մինչ օրս այդ հարցը չի լուծվել:

Ամփոփելով ամբողջ վերը բերվածը, խնդրում ենք ուսումնասիրել մեր առաջարկությունները և անհապաղ ձեռնամուխ լինել դրանց կամ առավել արդյունավետ ու հրատապ միջոցառումների իրականացմանը.

1. Ուսումնասիրել Հայաստանի տարածքում անցած քսան տարիներին տեղի ունեցած բոլոր ճանապարհատրանսպորտային պատահարների վիճակագրությունը, հետեւանքները, աշխարհագրությունը, օրինաչափությունները, մարդկային գործոնի ազդեցության չափը այդ դեպքերում և այդ գործոնի նվազեցման հնարավորությունները՝ պետական և համայնքային իշխանությունների միջամտությամբ:
2. Ուսումնասիրել ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելման եւ նվազեցման համաշխարհային առաջավոր փորձը:
3. Հանրության շահագրգիռ խմբերի և փորձագետների մասնակցությամբ ձեռնամուխ լինել՝ մշակելու Հայաստանում ճանապարհատրանսպորտային պատահարների, դրանցում մահվան և մարմնական վնասվածքների դեպքերի նվազեցման հայեցակարգ և ռազմավարություն:
4. Հասարակական փոխադրամիջոցների անվտանգ շահագործման աստիճանի բարձրացման նպատակով նորովի փորձաքննել եւ վերանայել դրանց օրենքով սահմանված չափանիշները:
5. Մինչեւ ճանապարհային անվտանգության նոր հայեցակարգի ստեղծումը եւ ռազմավարական ծրագրի գործարկումը, անհետաձգելի միջոցներ ձեռնարկել վտանգավոր ճանապարհահատվածների եւ խաչմերուկների անվտանգության ապահովման համար, այդ թվում՝ ճանապարհապարեկային շուրջօրյա հերթապահություն սահմանել այդ հատվածներում, ժամանակավոր վերակառուցել դրանք, լրացուցիչ կահավորել ճանապարհային նշաններով, լուսաֆորներով, մշտական նախազգուշական լուսաթարթիչներով, հայելիներով, արագաչափերով, տեսախցիկներով, արհեստական խոչնդոտներով և այլ հատուկ միջոցներով:
6. Ձեռնարկել միջոցներ Գյումրի քաղաքի փողոցային երթևեկության կարգավորման միջոցները և համակարգերը ՀՀ ճանապարհային ոստիկանությանը փոխանցելու ուղղությամբ:

Կողմ (19) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Գ. Ադամյան _____

Ա. Բաղեյան _____

Ա. Բաղրամյան _____

Լ.Բարսեղյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«14» նոյեմբերի 2014 թ.